մաձայն կը նստէր և կ'ելլէր, վասնզի ան իրենց աշխարհէն կ'երևէր մինչև Պաղեստին և կ'առաջնորդէր, երբ անոնք Երուսաղէմ հասան՝ կը ծածկուէր։ Երբ Երուսաղէմէն ելան՝ դարձեալ կը յայտնուէր, մինչև որ ցոյց տուաւ տեղը և Մանուկը։ Ասիկա աստղի մը գնացքը չէ, այլ խօսուն և իմաստուն զօրութիւն մը, որովհետև ան երկինքի վրայ կենալով չէր որ տեղը ցոյց կուտար որ հնար ալ չէր, այլ դէպի երկիր իջնելով եկաւ կեցաւ հոն՝ ուր էր Մանուկը, ըստ Աւետարանչին, վասնզի այրը փոքր խղի մը նմանութիւնը ունենալով՝ ի՞նչպէս այդքան բարձրութենէն աստղը պիտի կրնար ցոյց տալ քանի որ վարերը կը գտնուէր։ Երկինքի վրայ բևեռուած չէր անիկա, այլ իշխանական աստղ մը որ իր կամքովը կ'իջնէր, կը բարձրանար օդին վրայ։ Եւ յետոյ բոլոր լուսաւորները արեւելքէն արևմուտք կ'երթան, իսկ ան հիւսիսէն հարաւ, որովհետև Պաղեստինը Պարսից հարաւ–արեւմուտքը կը գտնուի։ Նախ զարմանալի է որ արեւին լոյսը գիշերը կը ծածկուի և լուսնին ու աստղերունը ցերեկ ժամանակ, իսկ ասոր լոյսը ամէն կողմով պայծառացած էր այնքան՝ որ արևի ճառագայթները կը մթնցնէր, ապա թէ ոչ ցերեկը ի՞նչպէս պիտի երևէր անոնց ու առաջնորդէր, և օրէնք չէ որ լուսաւորները սահմանեալ ժամանակէն աւելի երկրի վրայ կենան և չծածկուին երկրի տակը» (Մեկն. Մատթեի Բ. 39–40)։

զ) Ս. Ծննդեան աստղին աւանդութիւնը ըստ Ս. Գրիգոր Վրդ. Տաթևացիի (1340–1411). — Իր գործերէն Զմրան հատոր Քարոզգրքին մէջ (էջ 43) կը կարդանք Ս. Ծննդեան աստղի մասին պատառիկ մը. «... Լուսաւոր աստղը առաջնորդեց մոգերը եւ եկաւ մտաւ